ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ԴԻՄԱՑ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ գլխին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Մարգարյան փողոցի նախկին հ.45 շենքից սեփականության իրավունքով Սիլվա Կարապետյանին պատկանող 122.9 քմ մակերեսով հ.51 տարածքի դիմաց տրամադրել Մարգարյան փողոցի նոր կառուցված հ.45 շենքի հ.132 հասցեում գտնվող, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 125.2 քմ մակերեսով տարածքը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔԻ ԴԻՄԱՑ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ Երևան քաղաքի Մարգարյան փողոցի հ.45 հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքի բնակիչները 2008-2009թթ.-ին վերաբնակեցվել են, սակայն շենքում սեփականության իրավունքով Սիլվա Կարապետյանին պատկանող հ.51՝ 122.9 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի փոխհատուցման հարցը չի լուծվել:

Մարգարյան փողոցի հ.45 հասցեում գտնվող վթարային շենքը քանդվել է և տեղում կառուցվել է նոր շենք և այդ ընթացքում քննարկվող տարածքը, որը նախկինում հանդիսացել է ավտոդպրոց, սեփականատիրոջ կողմից հնարավոր չի եղել օգտագործել և ավտոդպրոցի աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:

Ներկայումս Երևանի քաղաքապետարանի և Սիլվա Կարապետյանի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն, համաձայն որի՝ Մարգարյան փողոցի քանդման ենթակա հ.45 շենքի քանդումից և նույն տեղում նոր շենքի կառուցումից հետո սեփականության իրավունքով իրեն պատկանող 122.9 քմ մակերեսով հ.51 տարածքի դիմաց Մարգարյան փողոցի հ.45 շենքից համանման տարածք տրամադրելու վերաբերյալ: Սիլվա Կարապետյանի կողմից ներկայացվել է նաև գրավոր համաձայնություն՝ Մարգարյան փողոցի հ.45 հասցեում գտնվող քանդված շենքում սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքի հետ կապված Երևան համայնքի նկատմամբ պահանջ չներկայացնելու, ինչպես նաև տևական ժամանակ սպասելու համար պահանջից հրաժարվելու վերաբերյալ:

Արդյունքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շենքի շինարարական աշխատանքներն ավարտված են և Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.132 հասցեում փաստացի կառուցվել է համանման 125.2քմ մակերեսով հասարակական տարածք՝ խնդրի վերջնական լուծման համար նպատակահարմար է գտնվել ընդունելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԻ ԴԻՄԱՑ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքի դիմաց տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԻ ԴԻՄԱՑ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքի դիմաց տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ